



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 8

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2018 Թ. ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. 2017-18 ուստարվա 1-ին կիսամյակի սոցիալական արդյունքների քննարկում:
2. Մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում:
3. Ռեկտորատի մի շարք որոշումների և հրամանների կատարման ընթացքը ֆակուլտետում:
4. Ընթացիկ հարցեր:

Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը գիտխորհրդի մասնակիցներին տեղեկացրեց, որ խորհրդի 25 անդամներից նիստին մասնակցում է 22-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Դեկանն այնուհետև ծանոթացրեց նիստի օրակարգի հարցերին, որոնք միաձայն ընդունվեցին բաց քվեարկությամբ:

1-ին հարցի առիթով (2017-18 ուստարվա 1-ին կիսամյակի սոցիալական արդյունքների քննարկում) պրոֆ. Ա. Ավագյանը հանգամանորեն ներկայացրեց սոցիալական արդյունքների քննարկումը՝ գիտխորհրդի անդամների ուշադրությունը հատկապես բնեռ-

լով ցածր նիշեր ստացած պրոֆեսորադասախոսական անձնակազմի կոնկրետ անդամների վրա և հանձնարարեց բոլոր ամբիոնների վարիչներին պարզել պատճառները:

Հարցի առիթով ելույթ ունեցողները (դոց. Ա. Սարգսյան, պրոֆ. Վ. Սաֆարյան և այլք) նկատեցին, որ սոցիալոգիայի գնահատման նոր՝ համացանցային եղանակն ունի սովորույթ ուրուցող կողմեր, այն է՝ ուսանողների անտարբերության պատճառով քչերն են մասնակցում գործընթացին, իսկ երբեմն էլ՝ հիմնականում նրանք, ովքեր դժգոհ են եղել իրենց ստացած միավորներից: Առաջարկություն եղավ մտածել ուղիներ՝ է՛լ ավելի կատարելագործելու գնահատման գործընթացը:

Օրակարգի **2-րդ հարցի** առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանին: Վերջինս ամփոփ ներկայացրեց մանկավարժական պրակտիկայի արդյունքները: Նա մասնավորապես նկատեց, որ թեև ապրիլյան անհանգիստ օրերին (դասադուլներ, գործադուլներ...) ինչ-որ չափով խաթարվել է ուսանողների մանկավարժական պրակտիկայի անցկացումը մայրաքաղաքի հանրակրթական դպրոցներում, այնուամենայնիվ ուսանողներն ու դեկավարները հիմնականում կարողացել են հաղթահարել առաջացած դժվարությունները, և պրակտիկան կայացել է. արդեն պատրաստ են բոլոր դասամատյանները, կատարված են գնահատումները:

Հարցի առիթով ձայն խնդրեց պրոֆ. Յու. Ավետիսյանը: Նա խոսեց մանկավարժական պրակտիկայի անցկացման որոշ թերացումների մասին՝ մասնավորապես նկատելով, որ ուսանողության մեջ նշմարվում են մի տեսակ անտարբերություն, ոգևորության պակաս, և անհրաժեշտ է նոր ուղիներ փնտրել ուսումնական գործընթացի այդ կարևոր բաղադրիչներից մեկը կատարելագործելու համար:

Օրակարգի **3-րդ հարցը** նվիրված էր ֆակուլտետում ռեկտորատի մի շարք որոշումների և հրամանների կատարման ընթացքին:

Պրոֆ. Ա. Ավագյանը ծանոթացրեց ռեկտորատի մի շարք որոշումներին և ներկայացրեց հրամանների կատարման ընթացքը հայ բանասիրության ֆակուլտետում:

Ընթացիկ հարցերում՝

Լ Ս Ե Ց Ի Ն - Բանասիրական գիտությունների թեկնածու, հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ **Անախդա Ժորայի Մովսիսյանին** դոցենտի գիտական կոչման գործընթացին մասնակցելու համար միջնորդություն տալու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. Բ. Ներսիսյանը և ուրիշները:

Նշվեց, որ ասիստենտ Անախդա Մովսիսյանի գիտամանկավարժական գործունեությունը արդյունավետ է: 2006 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ա. Ս. Պուշկինի բանաստեղծությունների հայերեն թարգմանությունների լեզուն» թեմայով: Տպագրել է ուսումնամեթոդական աշխատանքներ՝ «Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ» (համահեղինակ՝ Բ. Ներսիսյան, Ա. Տեր-Մինասյան և այլք), «Թարգմանական վարժությունների դերը թարգմանության գործընթացում», հրատարակել է 11 գիտական հոդված: 2006 թվականից աշխատում է հայոց լեզվի ամբիոնում՝ որպես ասիստենտ:

«Դասախոսն ուսանողի աչքերով» սոց. հարցման արդյունքը 4.65 միավոր է:

Ներկայացված փաստաթղթերը հիմք են տալիս երաշխավորելու Անախդա Մովսիսյանին մասնակցելու դոցենտի գիտական կոչման համար սահմանված գործընթացին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ բանասիրական գիտությունների թեկնածու, հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ **Անախդա Մովսիսյանին** մասնակցելու դոցենտի գիտական կոչման համար սահմանված գործընթացին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Բանասիրական գիտությունների թեկնածու, հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ **Լիանա Սամվելի Սարգսյանին** դոցենտի գիտական կոչման գործընթացին մասնակցելու համար միջնորդություն տալու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. Բ. Ներսիսյանը և ուրիշները:

Նշվեց, որ ասիստենտ Լիանա Սարգսյանի գիտամանկավարժական գործունեությունը արդյունավետ է: 2013 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Երգիծանքի լեզվաոճական միջոցները Ե. Օտյանի գեղարվեստական արձակում» թեմայով: Տպագրել է մենագրություն՝ «Ուղեցույց հայոց լեզվի. հնչյունաբանություն, բառագիտություն, քերական»

նություն» (համահեղինակ՝ Յու. Ավետիսյան, Լ. Թեյան, Լ. Ավետիսյան), ուսումնամեթոդական աշխատանքներ՝ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ: Գործնական աշխատանքների ձեռնարկ» (համահեղինակ՝ Յու. Ավետիսյան, Լ. Ավետիսյան, Ռ. Մաղաթեյան), «Հայոց լեզու և խոսքի մշակույթ (բուհական դասագիրք՝ հաստ. ՀՀ ԿԳ նախարար. կողմից)» (համահեղինակ՝ Յու. Ավետիսյան, Լ. Թեյան, Ա. Սարգսյան և այլք), «Մեթոդական ուղեցույց ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման եղանակների և ընթացակարգի վերաբերյալ» (համահեղինակ՝ Լ. Ավետիսյան, Լ. Մելքոնյան), հրատարակել է 12 գիտական հոդված: 2013 թվականից աշխատում է հայոց լեզվի ամբիոնում՝ որպես ասիստենտ:

«Դասախոսն ուսանողի աչքերով» սոց. հարցման արդյունքը 4.49 միավոր է:

Ներկայացված փաստաթղթերը հիմք են տալիս երաշխավորելու Լիանա Սարգսյանին մասնակցելու դոցենտի գիտական կոչման համար սահմանված գործընթացին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ բանասիրական գիտությունների թեկնածու, հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ **Լիանա Սարգսյանին** մասնակցելու դոցենտի գիտական կոչման համար սահմանված գործընթացին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Բանասիրական գիտությունների թեկնածու, հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ **Արևիկ Սերգեյի Քամալյանին** դոցենտի գիտական կոչման գործընթացին մասնակցելու համար միջնորդություն տալու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. Բ. Ներսիսյանը և ուրիշները:

Նշվեց, որ ասիստենտ Արևիկ Քամալյանի գիտամանկավարժական գործունեությունը արդյունավետ է: 2002 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ս. Եսենինի չափածոյի հայերեն թարգմանությունների լեզուն» թեմայով: Տպագրել է ուսումնամեթոդական աշխատանք՝ «Հայոց լեզվի և խոսքի մշակույթի գործնական աշխատանքների ձեռնարկ» (համահեղինակ՝ Գ. Ներսեսյան, Ս. Գաբրիելյան և այլք), հրատարակել է 10 գիտական հոդված: 1998 թվականից աշխատում է հայոց լեզվի ամբիոնում՝ որպես ասիստենտ:

«Դասախոսն ուսանողի աչքերով» սոց. հարցման արդյունքը 4.74 միավոր է:

Ներկայացված փաստաթղթերը հիմք են տալիս երաշխավորելու Արևիկ Քամալյանին մասնակցելու դոցենտի գիտական կոչման համար սահմանված գործընթացին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ բանասիրական գիտությունների թեկնածու, հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ **Արևիկ Բամալյանին** մասնակցելու դոցենտի գիտական կոչման համար սահմանված գործընթացին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հատուկ դասընթացը՝ «Միջին հայերենի հոլովման և խոնարհման համակարգը», intranet համակարգում ներմուծելու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, բ. գ. թ., դոց. Ն. Դիլբարյանը և այլք:

Նշվեց, որ դասընթացները պետք է ընդգրկվեն intranet համակարգ ուսանողներին հասանելի դարձնելու նպատակով, դասընթացներից յուրաքանչյուրի համար սահմանված է երկու կրեդիտ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաշվի առնելով հատուկ դասընթացների՝ intranet համակարգում ներմուծելու անհրաժեշտությունը՝ միջնորդել ֆակուլտետի խորհրդին հաստատելու ամբիոնի որոշումը և թույլ տալ դասախոս Ս. Գրիգորյանին այն ներմուծելու համակարգ:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հատուկ դասընթացը՝ «Գրաբարի և արդի արևելահայերենի ընդհանրություններն ու տարբերությունները», intranet համակարգում ներմուծելու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, բ. գ. թ., դոց. Ն. Դիլբարյանը և այլք:

Նշվեց, որ դասընթացը պետք է ընդգրկվի intranet համակարգ ուսանողներին հասանելի դարձնելու նպատակով, դասընթացի համար սահմանված է երկու կրեդիտ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաշվի առնելով հատուկ դասընթացների՝ intranet համակարգում ներմուծելու անհրաժեշտությունը՝ միջնորդել ֆակուլտետի խորհրդին հաստատելու ամբիոնի որոշումը և թույլ տալ դասախոս Ն. Դիլբարյանին այն ներմուծելու համակարգ:

Լ Ս Ե Ց Ի Ն - Նորայր Պողոսյանի՝ «Մեր գրաբարը. զրույց - ընթերցումներ» գրքի քննարկումը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, բ. գ. թ., դոց. Ն. Դիլբարյանը և այլք:

Գիրքը գրախոսել են բ. գ. թ, դոց. Ն. Դիլբարյանը, Ա. Խաչատրյանը, ասիստ. Ն. Պարոնյանը: Գրախոսների կողմից արվեցին որոշ առաջարկություններ, որոնք քննարկվեցին

նիստի ընթացքում: Գրախոսների կարծիքները կցվում են արձանագրությանը: Գրքի խմբագիրն է Բ. Գ. Պ., պրոֆ. Վ. Գրիգորյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հաշվի առնելով Նորայր Պողոսյանի ներկայացրած գրքի ոչ ստանդարտ կառուցվածքն ու գիտահանրամատչելի բնույթը՝ աշխատանքը երաշխավորել տպագրության:

Գիտական խորհրդի նիստի վերջում նախագահ Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց բոլոր ներկաներին և նիստը համարեց փակված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ